

**«Կոոուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր
Փոքր դրամաշնորհների հայտի**

Ծրագրի անվանումը	Վանաձորի բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների մոնիտորինգ
Դիմող կազմակերպության անվանումը	«Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» ՀԿ
Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ	Բերո Առաքելյան հեռ.՝ 094 514000 Էլ. փոստ bero51@mail.ru
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր
Ծրագրի տևողությունը	Երկու ամիս 01.10.2016-30.11.2016
Ծրագրի հակիրճ նկարագիրը	Վանաձորի բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների մոնիտորինգի միջոցով բացահայտել ոլորտում առկա օրինախախտումներն ու չարաշահումները, խթանել հանրային վերահսկողությունը, նպաստել կառավարման մարմինների կողմից հեշվետու լինելու մշակույթի, փոխվստահության և փոխհամաձայնության մթնոլորտի ձևավորմանը, որոնք կնպաստեն բազմաբնակարան շենքերի կառավարման արդյունավետության բարձրացմանը
ԲՀԱ-ից պահանջվող Գումարի չափը	499 000 /չորս հարյուր իննսունինը հազար / ՀՀ դրամ
Ներդրման գումարի չափը	98 000 /իննսունութ հազար/ ՀՀ դրամ
Ծրագրի բյուջեն (նշել դրամով)	529 000 /հինգ հարյուր քսանինը հազար / ՀՀ դրամ
Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)	Բացակայում է

Դիմող կազմակերպության նկարագրություն (առավելագույնը կես էջ)

«Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» ՀԿ

Հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրանյան 6

Հեռախոս՝ +0322 94514000, E-mail: bero51@mail.ru

«Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» կազմակերպությունը գործում է 1999թ.-ից: Հիմնադիր և նախագահ՝ Բերո Եղիշի Առաքելյան: 2004թ. դեկտեմբերի 17-ին վերագրանցվելով՝ վերանվանվել է «Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» ՀԿ-ի. Վկայական թիվ 03Ա 067212: Միավորում էր 62 համատիրություններ՝ 976 բազմաբնակարան շենքերով, 79240-ից ավելի բնակչությամբ:

Հիշատակելի աշխատանքներ.

2004թ. դեկտեմբերից մինչև 2005թ. հոկտեմբերը «Եվրասիա» հիմնադրամի աջակցությամբ Վանաձոր, Ստեփանավան և Ալավերդի քաղաքներում իրականացրել է «Համատիրությունների ստեղծում և աջակցում» ծրագիրը:

«Քաունթերփարթ ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության աջակցությամբ 2007թ.-ին իրականացրել է «Համատիրությունների արդյունավետ կառավարում բնակիչների մասնակցությամբ», իսկ 2008թ. «Կայացած համատիրություն, բարեկարգ համայնք» ծրագրերը:

Ծրագրի նկարագրություն (առավելագույնը երկու էջ)

1. Իրավիճակի ներկայացում

Վանաձորում բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակն անհանգստացնող է: Այս խնդիրը մասշտաբային է և ունի ռազմավարական նշանակություն, քանի որ այն կապված է բազմաբնակարան շենքերի բնակչության երկարաժամկետ բնակարանային ապահովության հետ: Բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում ներկայումս իրականացվող հանրային քաղաքականությունը չունի հաշվետվական և վերահսկողության գործուն և ուժեղ մեխանիզմներ ոլորտի պատասխանատու կառույցների՝ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և համայնքների ՏԻՄ-ի գործունեության նկատմամբ իրական վերահսկողություն իրականացնելու համար: Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և համայնքների ՏԻՄ-ի մակարդակներում տարածված են սովերային երևույթներ, ինչպես օրինակ՝ բազմաբնակարան շենքերի պահպանման ու շահագործման համար առկա սահմանափակ ռեսուրսների աննպատակ օգտագործումը: Արդյունքում, բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման օրենսդրական պահանջները հիմնականում չեն կատարվում, որի հետևանքով բազմաբնակարան շենքերի բնակչության բնակարանային-կոմունալ պայմանները էլ ավելի են վատթարանում:

Այժմ Վանաձորում գրանցված են 60 համատիրություններ, որոնց սպասարկման տիրույթում է 890 բազմաբնակարան շենք: 21 համատիրություն ունի իրավաբանական անձի կարգավիճակ, սակայն գործունեություն չի իրականացնում:

1. Ծրագրի նպատակը

Իրականացնել բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների մոնիտորինգ հետևյալ նպատակներն իրագործելու համար.

Ա. Հավաստի և հիմնավորված տվյալների հավաքագրում բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների պրակտիկայի և արդյունավետության, կառավարման որակի մասին, շահերի բախման և այլ անկատարությունների վերաբերյալ, որոնք խոչընդոտում են զարգացման գործընթացներին և դժվարացնում են բազմաբնակարան շենքերի կառավարման արդյունավետությունը:

Բ. Իրավական, տնտեսական և սոցիալական գործոնների օրինախախտումների բացահայտում, որոնք թույլ են տալիս բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինները: Դրանք էլ

բացասական ազդեցություն են ունենում բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների գործունեության վրա իրենց օրինական պարտականությունների կատարման ընթացքում:

Գ. Տեղեկատվության հավաքագրում և տրամադրում բազմաբնակարան շենքերի բնակիչներին, զանգվածային լրատվամիջոցներին, համայնքային իշխանություններին բազմաբնակարան շենքերի կառավարման իրական գործընթացների և դրանցում առկա ստվերային երևույթների և սեփականատիրոջ իրավունքների վերաբերյալ:

Մոնիտորինգի ընթացքում ստացված այն տեղեկատվությունը, որը վերաբերում է պրակտիկայում օրենսդրության կիրառմանը, կնպաստի ոլորտի հայեցակարգային փաստաթղթերի, օրենսդրության և ոլորտի զարգացման ծրագրերի կատարելագործմանը, արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:

2. Մոնիտորինգի օբյեկտները

1. բազմաբնակարան շենքերի բնակարանների սեփականատերեր և բնակիչներ
2. բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ /գործող համատիրություններ և գրանցված, սակայն չգործող համատիրություններ/
3. տեղական ինքնակառավարման մարմիններ

3. Մոնիտորինգի մեթոդաբանությունը

1. աղբյուրների ձեռքբերում, որոնք պարունակում են մոնիտորինգի առարկայի վերաբերյալ տեղեկատվություն. փաստաթղթեր կամ ստանդարտ հարցաթերթեր, որոնք լրացված են բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների մասնակիցների կողմից հարցախույզի կամ հարցազրույցի ընթացքում
2. հավաքագրված տեղեկատվության վերլուծություն մոնիտորինգի օբյեկտների վրա անմիջական ազդեցություն ունեցող փաստերի բացահայտման նպատակով, որոնք համապատասխանում են մոնիտորինգի առարկային
3. բացահայտված փաստերի և երևույթների արձանագրում
4. բացահայտված փաստերի ի հայտ գալու և գործելու պատճառների բացատրություն
5. բացահայտված փաստերի, երևույթների ընդհանրացում՝ ընդհանուր օրինաչափությունների, բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների պրակտիկան բնութագրող հատկանիշների բացահայտման նպատակով
6. բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների կատարելագործման առաջարկությունների և դրանց իրականացման կոնկրետ քայլերի ձևավորում
7. զեկույցի տեքստի պատրաստում, որը առարկայացնում է իրականացված մոնիտորինգի հիմնական արդյունքները

4. Ծրագրի շահառուները

- բազմաբնակարան շենքերի բնակարանների բնակիչները, անկախ կառավարման իրավական ձևից
- բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ
- տեղական ինքնակառավարման մարմիններ և ծառայություն իրականացնող մարմիններ

5. Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ծրագրի շրջանակներում իրականացված մոնիտորինգի արդյունքում ձևավորված բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների կատարելագործման առաջարկությունների և դրանց իրականացման կոնկրետ քայլերը կիրառելով՝

- կավելանա սեփականատերերի և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների միջև փոխվստահությունն ու փոխհամաձայնությունը,

- կձևավորվի կառավարման մարմնի կողմից բնակարանների սեփականատերերին հաշվետվությունների տրամադրման մշակույթ,
- կնվազեն ոլորտի չարաշահումներն ու կոռուպցիոն ռիսկերը:

6. Վերոհիշյալ արդյունքներն ուղղակիորեն կունենան հետևյալ ազդեցությունը՝

- շենքերի պահպանմանն առնչվող ծախսերի և աշխատանքների մասին իրական պատկերացումների ձևավորում սեփականատերերի մոտ,
- բազմաբնակարան շենքերի պահպանման համար սեփականատերերի ներդրումների ավելացում,
- բազմաբնակարան շենքերի պահպանման և այլ պարտադիր վճարների հավաքագրման մակարդակի ավելացում,
- պետական, համայնքային և այլ աջակցության տրամադրման խթանում,
- շենքերի պահպանման պարտադիր նորմերի կիրառում,
- վճարման արդյունավետ մեխանիզմների ներդրում,
- կառավարման ոլորտում արհեստավարժ կառավարիչների ինստիտուտի ներդրում,
- կնվազեն ստվերային երևույթներն ու կոռուպցիոն ռիսկերը:

Ժամանակացույց

**Վանաձորի բազմաբնակարան շենքերի
կառավարման գործընթացների մոնիտորինգի ծրագրի**

Շաբաթ	Գործողություն
1-ին	Մոնիտորինգի օբյեկտների գործունեությանն առնչվող աղբյուրների ընտրանքային հստակեցում /բնակարանների սեփականատերեր, բնակիչներ, շենքերի կառավարման մարմիններ, ՏԻՄ, ծառայություն մատուցող կառույցներ
2-րդ	Կլոր-սեղան սեմինար. ա/ ծրագրի ներկայացում բ/ Աղբյուրներից ստացված նախնական տեղեկատվության քննարկում և վերլուծություն. բ/ Մոնիտորինգի օբյեկտների աշխատանքի վրա անմիջական ազդեցություն ունեցող փաստերի և գործոնների բացահայտում /հանրայնացում տեղական ՁԼՄ-ով/
3-րդ	Մոնիտորինգ՝ պատահականության սկզբունքով ընտրված համատիրություններում՝ մոնիտորինգի օբյեկտների և նրանց գործունեության վրա առավել բացասական ազդեցություն ունեցող իրավական, սոցիալական, տնտեսական , համակեցությանն առնչվող փաստերի, միտումների և գործոնների փաստագրման նպատակով
4-րդ	Բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացների կատարելագործման և վեր հանված խնդիրների հաղթահարման վերաբերյալ հիմնավոր առաջարկությունների լրամշակված փաթեթի

	կազմում
5-րդ	Հիմնավոր առաջարկությունների փաթեթի ներկայացում մոնիտորինգի ընտրանքային սկզբունքով ընտրված աղբյուրների ներկայացուցիչներին վերջնամշակման նպատակով:
6-րդ	Բազմաբնակարան շենքերի կառավարման արդյունավետությունը բարձրացնող առաջարկությունների կիրառման ճանապարհային քարտեզի կազմում
7-րդ	Կլոր սեղան-սեմինար. Մոնիտորինգի հիմնական արդյունքներն առարկայացնող ամփոփիչ զեկույցի ներկայացում, հրապարակում, տրամադրում շահառուներին: Կատարված աշխատանքի արդյունքների քննարկում՝ շահառուների հետ/հանրայնացում տեղական ԶԼՄ-ով/:
8-րդ	Կլոր սեղան-աշխատանքային հանդիպում. Մոնիտորինգի ամփոփիչ զեկույցի և առաջարկությունների ճանապարհային քարտեզի ներկայացում /հանրայնացում տեղական ԶԼՄ-ով/:

Այլ տեղեկատվություն

Այլ կազմակերպություններ, որոնց ներկայացրել էք սույն ծրագիրը և ձեր դիմումի կարգավիճակը

Սույն ծրագիրը որևէ այլ կազմակերպության չի ներկայացվել:

Դրամաշնորհային հայտին կից ներկայացվելիք փաստաթղթերի ցանկ

1.	«Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» ՀԿ-ի կանոնադրության պատճենները	+
2.	«Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» ՀԿ-ի պետական գրանցման վկայականի պատճենները՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները	+
3.	ԻՀԱ-ի կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ուսուցումների մասնակցության վկայականի պատճենը	+
4.	«Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» ՀԿ-ի հարկ վճարողների հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը.	+
5.	«Լոռու մարզի համատիրությունների կենտրոն» ՀԿ-ի բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկություն	+
6.	Ծրագրի հիմնական աշխատակազմի ինքնակենսագրականները	+

ԼՄՀԿ-ի նախագահ, ծրագրի ղեկավար՝

Բերո Առաքելյան